ԱՄՆ-Ի ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1990-2000թթ.)

ՊՈՂՈՍՅԱՆ Է.Վ.

Հայ-ամերիկյան հարաբերությունները ՀՀ անկախությանը հաջորդած առաջին տասնամյակում դինամիկ զարգացում էին ապրում՝ ընթանալով փոխըմբռնման և համագործակցության մթնոլորտում: Միացյալ Նահանգների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ առավելապես պայմանավորված էր ԱՄՆ-ի ռազմավարական հետաքրքրությամբ ամբողջ անդրկովկասյան տարածաշրջանի հանդեպ, ինչպես նաև երկրում քաղաքականապես ազդեցիկ հայ համայնքի առկայության փաստով: Ինչպես վկայում էր Ամերիկայի վարած արտաքին քաղաքականությունը, Միացյալ Նահանգները ցանկանում էր, որ անդրկովկասյան տարածաշրջանը զարգանա իբրև մեկ ամբողջություն[1]: Այդ առումով ՀՀ և ԱՄՆ շահերը հիմնականում համընկնում էին, և Հայաստանը ևս շահագրգռված էր նախաձեռնող բնույթ կրող երկխոսություն վարելու ԱՄՆ-ի կառավարության կողմից առաջարկվող՝ տարածաշրջանային տնտեսական համագործակցության ծրագրերի շուրջ: Այդ համատեքստում կարևորվում էին Միացյալ Նահանգների միջնորդական ջանքերը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Հայաստանի անկախացմանը անմիջապես հաջորդած շրջանում աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես երկբևեռ քաղաքական համակարգի փլուզումը, զգալիորեն բարձրացրել էին ԱՄՆ-ի դերը միջազգային գործերում, հատկապես Անդրկովկասի տարածաշրջանում: Նման իրավիճակում Հայաստանն ուներ էական շահագրգռություններ ԱՄՆ-ի հետ ձևավորելու և խորացնելու բազմաբնույթ ու ծավալուն փոխհարաբերություններ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ ոլորտներում: Ինչ վերաբերում է տարածաշրջանում ԱՄՆ-ի վարած քաղաքականության գերակա ուղղություններին, ապա հարկ է նշել, որ դրանք որոշակիորեն բևեռված բնույթ ունեին, որոնց հակադիր ծայրերում գործում էին Թուրքիան և Իրանը: Հենց այդ բևեռներով անցնող առանցքի շուրջն էլ կառուցված էր ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությունը: Այդ առումով, որոշակի իմաստով, նորանկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ վարվող քաղաքականությունը ևս առնչվում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական հետաքրքրությունների հիմնական առանցքին[2]: Քաղաքական բնագավառում երկու երկրների հարաբերություններում վճռական էր 1992 թ. միմյանց հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Հաջորդ, թերևս կարևորագույն ակտը միջպե-

---

[1] *Հայաստանի Հանրապետություն, 26. VII. 1997, 31. III. 1999:*

[2] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 9-10:*

տական երկկողմ հարաբերությունների կայացման բնագավառում 1992 թ. փետրվարին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Բեյքրի այցն էր Հայաստան[3], որին հետևեցին ՀՀ և ԱՄՆ իշխանական տարբեր օղակները ներկայացնող, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների պատվիրակությունների փոխայցելությունները[4]: Հենց դիվանագիտական հարաբերությունների հաստատման տարում երկու երկրների պաշտոնական ներկայացուցիչների միջև կայացած հանդիպումների ընթացքում ստորագրվեցին մի քանի կարևոր պայմանագրեր, որոնց մեջ հատկապես կարևորվում էր ապրիլի 2-ին Վաշինգտոնում կնքված «ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև առևտրական հարաբերությունների վերաբերյալ» համաձայնագիրը: Համաձայն այդ պայմանագրի՝ Հայաստանի համար, որը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր նման պայմանագիր ստորագրել Միացյալ Նահանգների հետ, միջպետական առևտրի հարցերում սահմանվել էր առավել բարենպաստ ռեժիմ, վերացվել էին նախկին սոցիալիստական երկրների վրա տարածվող մի շարք սահմանափակումներ և այլն[5]: Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Հայաստանի կենսական շահերից բխող փոխհարաբերությունների ամրապնդման գործում վճռորոշ էր նաև 1992 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի 47-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու նպատակով ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը ԱՄՆ[6], որի ընթացքում էլ կնքվեց տնտեսական փոխգործունեության բնագավառի կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» պայմանագիրը[7], որը կոչված էր նպաստելու կողմերի միջև լայն տնտեսական համագործակցությանը, խթանելու մասնավոր կապիտալի հոսքը և այլն: Նույն այցի շրջանակում Վաշինգտոնում ստորագրվեց ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական բնույթի, ժողովրդական դիվանագիտության բնագավառի կարևոր փաստաթուղթ, որով նախատեսվում էր, աշխարհի շատ երկրների նման, Հայաստանում ևս ԱՄՆ-ի Խաղաղության կորպուսի գործունեության ծավալում[8]: 9 կետից բաղկացած այդ համաձայնագրով նախատեսվում էր ԱՄՆ-ի կողմից Խաղաղության կորպուսի կամավորների գործուղում Հայաստան, որոնք, հաստատվելով Հայաստանում և աշխատելով երկու երկրների կառավարությունների կողմից նշանակված կառա-

---

[3] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №. 3 (1007), 15.II 1992, էջ 22-23:

[4] Հայաստանի Հանրապետություն, 21. III, 11. IV, 10. VI. 1992:

[5] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, N 3-4 (1093-1094), սեպտեմբեր, 1995, էջ 7, Հայաստանի Հանրապետություն, 4. IV. 1992:

[6] Հայաստանի Հանրապետություն, 22. IX. 1992:

[7] Հայաստանի Հանրապետություն, 26. IX. 1992: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տեղեկագիր, N 3-4 (1093-1094), սեպտեմբեր, 1995, էջ 6:

[8] ՀԱԱ, ֆ.326, ց.9, գ.139, թ.1-10:

վարական և մասնավոր կազմակերպությունների անմիջական հսկողությամբ, իրականացնելու էին համատեղ համաձայնեցված հանձնարարություններ[9]:

Տակավին 1961 թվականից ԱՄՆ-ում հիմնված Խաղաղության կորպուսը, ըստ էության, բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է օգնել աշխարհի տարբեր մասերում դրա կարիքը զգացող մարդկանց, որպեսզի վերջիններս կարողանան սեփական ուժերով իրենց առջև ծառացած հրատապ խնդիրները լուծել[10]: Փաստորեն, կազմակերպության օգնությունը տարբեր բնագավառների բանիմաց մասնագետներ տրամադրելն է: 1992 թ. դեկտեմբերին Հայաստան ժամանած Խաղաղության կորպուսի 21-ից 66 տարեկան շուրջ 39 անդամները, որոնք պետք է 2 տարի ժամկետով աշխատանքի մեկնեին Հայաստանի տարբեր շրջաններ, անգլերենի մասնագետներ էին և փոքր ձեռնարկատիրության խորհրդատուներ: ՀՀ ժամանելով՝ նրանք սկսեցին օգնել իրենց հայ բարեկամներին ուսանելու անգլերեն, ծանոթանալու փոքր բիզնեսի, արևմտյան տնտեսագիտության հիմունքներին և այլն[11]: Առաջին խմբի ժամանումից մոտ կես տարի անց Հայաստան էր գալու գյուղատնտեսության բնագավառի մասնագետներով համալրված Խաղաղության կորպուսի կամավորների հաջորդ խումբը: Խաղաղության կորպուսը, իրականացնելով ազատական հասարակության հիմնարար սկզբունքներին համապատասխան ժողովրդական դիվանագիտություն, Հայաստանում ձգտում էր նաև հասնել ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության հաստատման նպատակին: Գործունեության ողջ ընթացքում կորպուսի կամավորական խմբերը Հայաստանում պարբերաբար հաջորդում էին միմյանց: Այսպես, 1999 թ. օգոստոսին Եղեգնաձորում իրենց հանդիսավոր երդումը տվեցին ԱՄՆ-ից Հայաստան նոր ժամանած հերթական խմբի 36 անդամները[12]: ՀՀ-ում Խաղաղության կորպուսի գործունեությունը սկսելուց մինչև 2001 թ. հանրապետությունում աշխատել են 260 կամավորներ[13]:

Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև գիտակրթական բնույթի հումանիտար կապերի ոլորտում հատկապես առանձնանում է 1991 թ. սեպտեմբերին, ՀՀ անկախության հանրաքվեից ընդամենը օրեր անց, Կալիֆոռնիայի համալսարանի տնօրինության, Հայկական բարեգործական ընդհանուր միության և ՀՀ բարձրագույն կրթության ու գիտության կոմիտեի ջանքերով հիմնադրված՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը[14], որի առաջին ունկնդիրները դարձան բարձրագույն կրթությամբ 86 ուսանողներ, իսկ հաջորդ տարի համալսարան ընդունվեցին ևս 140 հայաստանցի երիտասարդներ[15]:

---

[9] *Հայաստանի Հանրապետություն, 2. X. 1992:*

[10] *Նույն տեղում, 26. II. 1993:*

[11] *Նույն տեղում, 12. XII. 1992, 26. II., 8. IV. 1993:*

[12] *Հայաստանի Հանրապետություն, 24. VIII. 1999:*

[13] *Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001: Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Ե., 2001, էջ 12:*

[14] *Հայաստանի Հանրապետություն, 24. IX. 1991:*

[15] *Նույն տեղում, 22. IX, 1992:*

Զեռք բերված միջպետական համաձայնությունների շնորհիվ հայ երիտասարդները հնարավորություն ունեին բարձրագույն կրթություն ստանալ ամերիկյան բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայ-ամերիկյան կրթամշակութային կապերի շրջանակում լուրջ աշխատանքներ էին տարվում նաև տարբեր բնագավառների հայ մասնագետների որակավորման բարձրացման ուղղությամբ: 1996 թվականից Հայաստանում գործում էր ամերիկյան Acceis կազմակերպության գրասենյակը, որն իրագործում էր ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի մշակութային և կրթական հարցերով զբաղվող բյուրոյի կողմից հովանավորվող ուսումնական և մշակութային փոխանակման ծրագրեր: Այդ բյուրոյի 2000 թ. ծրագրով ՀՀ բուհերի տարբեր մասնագիտությունների մի խումբ երիտասարդ դասախոսներ ԱՄՆ-ի համալսարաններում անցան արևմտյան կրթական չափանիշներին համապատասխան գիտամանկավարժական որակավորման բարձրացման դասընթացներ[16]: ԱՄՆ-ի մասնագետները Նահանգներում գործող կազմակերպությունների՝ Հայաստանում հաստատված մասնաճյուղերի միջոցով իրականացնում էին տարբեր բնագավառների մասնագետներ պատրաստելու և որակավորումը բարձրացնելու գործունեություն: Այսպես, օրինակ, խնդրո առարկա ժամանակահատվածում ամերիկյան ընկերության Հայաստանի մասնաճյուղում բացառիկ հաջողությամբ իրականացվում էր հաշվապահների և աուդիտորների որակավորման բարձրացում[17]: Հայ-ամերիկյան նմանատիպ համագործակցություն առկա էր նաև իրավագիտության, գյուղատնտեսության[18] և այլ բնագավառներում:

Միացյալ Նահանգները զգալի գործունեություն է ծավալել արցախյան խնդրին խաղաղ և արդարացի լուծում տալու՝ միջազգային հանրության ջանքերին աջակցելու ուղղությամբ, իսկ արդեն 1997 թվականից, որպես Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, ԱՄՆ-ը ամենակատիվ կերպով անմիջականորեն ներգրավվել է հայ-ադրբեջանական ռազմական հնարավոր նոր բախումները բացառելու և դարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման աշխատանքներին:

Չափազանց կարևոր էր նորանկախ Հայաստանում տնտեսության կայացման նպատակով ԱՄՆ-ի տարբեր պետական ու հասարակական հաստատությունների ցուցաբերած մասնագիտական օգնությունը: Այսպես, ԱՄՆ-ից ժամանած մասնագետների կազմակերպած խորհրդատվական գործունեության շնորհիվ Հայաստանում լայնորեն կիրառվեց բնակարանային սեփականաշնորհման ԱՄՆ-ի փորձը[19], որն ընկավ նաև ՀՀ ԳԽ-ի ընդունած համապատասխան օրենքի հիմքում[20]: Ամերիկյան մասնագետների գործուն մասնակցությու-

---

[16] Նույն տեղում, 1. III. 2000:

[17] Հայաստանի Հանրապետություն, 27. III. 1999:

[18] Նույն տեղում, 23. I, 10. VI. 1992:

[19] Նույն տեղում,15. X. 1993:

[20] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №. 12 (1040), 30. VI. 1993, էջ 4-9:

նը առկա էր նաև հանրապետությունում իրականացված սեփականաշնորհման մեծամասշտաբ ու աննախադեպ գործընթացի մյուս ոլորտներում:

Հայ-ամերիկյան հարաբերությունների խորացման գործում կարևոր էր ՀՀ - նախագահի գլխավորած պատվիրակության 1994 թ. օգոստոսին կայացած պաշտոնական այցը ԱՄՆ, որի ընթացքում ընդունվեց չափազանց կարևոր համատեղ հայտարարություն պաշտպանության և ռազմական բնագավառներում ԱՄՆ-Հայաստան ապագա հարաբերությունների մասին[21]: Ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բնագավառներում երկու երկրների միջև հարաբերությունների խորացմանը նպաստեցին նաև հաջորդ տարի Հայաստանի նախագահի՝ ՄԱԿ-ի հոբելյանական 50-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով ԱՄՆ կատարած այցի ընթացքում Միացյալ Նահանգների իշխանությունների հետ կայացած հանդիպումները[22]: Հայաստանի և ԱՄՆ-ի միջև կարևոր համաձայնություններ ձեռք բերվեցին նաև ՀՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանի՝ 1998թ. ՄԱԿ-ի հերթական նստաշրջանին[23], 1999 թ. ՆԱՏՕ-ի 50-ամյակի առթիվ Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի գագաթնաժողովին[24] մասնակցելու նպատակով ԱՄՆ կատարած այցերի ընթացքում: Հայ-ամերիկյան հատկապես տնտեսական փոխգործունեության զարգացման առումով չափազանց կարևոր էր ՀՀ նախագահի 2000 թ. հունիս ամսին Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցը[25]: Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխհարաբերություններին վերաբերող ընդգրկուն հարցեր քննարկվեցին 2000 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի «Հազարամյակի գագաթնաժողովին» մասնակցելու համար Ռ. Քոչարյանի՝ ԱՄՆ կատարած այցի և Միացյալ Նահանգների կոնգրեսականների, ինչպես նաև Ամերիկայի գործարար շրջանների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում[26]:

Հայ-ամերիկյան հարաբերությունների խորացման շրջանում ավելի էին աշխուժացել գործնական կապերը երկու երկրների կառավարությունների, խորհրդարանների, առանձին գերատեսչությունների միջև և այլն[27]: Նման կայուն փոխհարաբերությունների շնորհիվ երկու երկրների միջև կայացվում էին նրանց շահերով պայմանավորված համաձայնություններ միջպետական հարաբերությունների բոլոր բնագավառներում և մասնավորապես տնտեսական փոխգործունեության ոլորտում, որը ներառում էր համատեղ ձեռնարկությունների հիմնումը, վարկերի տրամադրումը, երկրների միջև ապրանքա-

---

[21] *Հայաստանի Հանրապետություն, 11. VIII. 1994:*

[22] *Նույն տեղում, 26, 27, 28. X. 1995:*

[23] *Նույն տեղում, 24,26. IX.1998:*

[24] *Նույն տեղում, 24,28. IV, 1. V. 1999:*

[25] *Նույն տեղում, 20,28,29,30. VI, 5. VII. 2000:*

[26] *Նույն տեղում, 5,7,9,12. IX. 2000:*

[27] *Նույն տեղում, 3. XI. 1995, 2,30. X. 1996, 26. V, 6. X, 14. XI. 1998, 10. III, 6. IV, 22. V, 2. VII, 10. VIII, 29. IX. 1999, 27. I, 16. XI. 2000:*

շրջանառությունը, զուտ տնտեսական իմաստով մարդասիրական օգնությունը և այլն:

Տնտեսական համագործակցության բնագավառում առաջին ծիծեռնակը տակավին 1991 թ. ամռանը, դեռևս մինչև ՀՀ անկախացման հանրաքվեի անցկացումը բացված «Հանթսման-Հայաստան» երկաթբետոնե կառուցվածքների հայ-ամերիկյան համատեղ գործարանն էր[28]: Երկու երկրների միջև համատեղ տնտեսական ձեռնարկումների բնագավառում առանձնահատուկ էր նաև մայրաքաղաքի ավտոմատ հեռախոսակայանների տեխնիկական վերազինումը իրականացնելու նպատակով ամերիկյան «Տրանսվորլդ» ընկերության հետ համատեղ «Արմենթել» ձեռնարկության ստեղծումը[29]:

Գնալով երկու երկրների միջև ծավալված տնտեսական համագործակցությունը ավելի էր խորանում: Այսպես, միայն 1998 թ. հոկտեմբերի սկզբներին Վաշինգտոնում կայացած՝ Հայաստանի էներգետիկ համակարգին նվիրված խորհրդաժողովի ընթացքում, որին, ի դեպ, մասնակցում էին ավելի քան 70 ամերիկյան միջազգային ընկերություններ, ՀՀ կառավարության ներկայացուցիչները համագործակցության կոնկրետ հուշագրեր էին ստորագրել «Արիալ Ինթերնեյշնել» կորպորացիայի հետ՝ Աբովյանի գազի պահեստարանի ընդլայնման և վերագործարկման, «Սաուզերն Քալիֆոռնիա Էդիսոն» ընկերության հետ էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի տնտեսական շահավետության բարձրացման միջոցառումների իրականացման, Հայ-ամերիկյան որոնողական ընկերության հետ՝ Գառնու շրջակայքում նավթի, գազի որոնողական աշխատանքների ծավալման, «Այ-բի-էմ» ընկերության հետ՝ Երևանի «Տրանզիստոր» գործարանի բազայի վրա միկրոսխեմաների արտադրության կազմակերպման մասին[30] և այլն:

Կայացած միջպետական համաձայնությունները բավական արագ կյանքի էին կոչվում: Հայաստանի տարբեր վայրերում շարունակվում էին նավթի և գազի որոնումները, 2000 թ. աշնանը «Տրանզիստոր» գիտաարտադրական միավորման բազայի վրա ամերիկահայ գործարար Ս. Սիմոնյանի նախաձեռնությամբ բացվեց «Էփիջի լեբս էյմ» ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության մասնաճյուղը[31]:

Ի դեպ, հենց քննարկվող ժամանակահատվածից սկսած՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությունը դարձավ Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: Ոչ շատ նյութատար, էներգիայի չափազանց քիչ ծախսումներ պահանջող, էկոլոգիապես մաքուր, արտադրանքի արտահանումը էլեկտրոնային կապուղիներով իրականացնող արդյունաբերության այդ ճյուղը շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար արտադրության կազմակերպման և արտադրանքի իրացման լավագույն տարբերակներից էր:

---

[28] Նույն տեղում, 25. VI. 1991:

[29] Նույն տեղում, 7. V. 1998:

[30] Նույն տեղում, 9. X. 1998:

[31] Նույն տեղում, 21. IX. 2000:

Հայաստանի տնտեսության մեջ ուղղակի ներդրումների առումով առաջատար տեղերից մեկը պատկանում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Այսպես, 1998 թ. արտասահմանյան երկրների՝ Հայաստանի տնտեսության մեջ կատարած 229 մլն[32] դոլարի ուղղակի ներդրումներից մոտ 36 մլն-ը իրականացրել էր ԱՄՆ-ը[33], որը Հայաստանում ներդրում էր անում հիմնականում, էներգետիկայի տեղեկատվական տեխնոլոգիաների, գյուղատնտեսության և սննդի մշակման, զբոսաշրջության բնագավառներում[34]:

Հարկ է նշել, որ հետագայում Միացյալ Նահանգների ներդրումային ցուցանիշները էականորեն նվազեցին: Ի տարբերություն դրա, քննարկվող ժամանակահատվածում ԱՄՆ-ը մշտապես առաջինն էր Հայաստանին ցուցաբերած մարդասիրական օգնության չափերով: Սկսած հայ ժողովրդի համար ողբերգական 1988 թվականի դեկտեմբերից՝ ամերիկյան կառավարությունը կանոնավոր կերպով Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու հատուկ ծրագիր էր իրականացնում: Այդ գործընթացը էլ ավելի ծավալվեց Հայաստանի անկախացումից հետո:

Չափազանց կարևոր էր ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև 1992 թվականին կնքված «Մարդասիրական առաքումների կարգավորման վերաբերյալ» պայմանագիրը, որով դեպի Հայաստանի Հանրապետություն իրականացվող մարդասիրական օգնության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշվել էր Միացյալ Նահանգներից օգնության ծրագրերի իրականացման համար Հայաստան ներկրվող օժանդակ սարքերը, նյութերը և այլ ունեցվածքը ազատել ամեն տեսակի հարկերից[35]:

Միջկառավարական պայմանագրի կնքումից անմիջապես հետո 1992 թ. ԱՄՆ-ի կառավարությունը, որպես մարդասիրական օգնություն, 23 մլն դոլարի հացահատիկ և սննդամթերք էր առաքել Հայաստանի Հանրապետություն: Նախատեսվում էր 1993 թ. ՀՀ հասցնել ևս 50 հազ. տոննա հացահատիկ, մանկական սնունդ, դեղորայք և այլն: Միացյալ Նահանգները 5 մլն դոլար էր հատկացրել Վրաստանի տարածքով էներգակիրներ Հայաստան տեղափոխելու համար: Սակայն, ըստ կազմված ծրագրի, Հայաստանին ցուցաբերվող մարդասիրական օգնությունը դրանով չէր սահմանափակվելու: Այն նախատեսում էր ամերիկացի մասնագետների մասնակցություն գյուղատնտեսության, ձեռնարկատիրության, էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը: Այսպես, նույն՝ 1993թ. նախատեսվում էր 40 ամերիկացի ֆերմերների ժամանումը Հայաստան: Նրանք տեղում աջակցելու էին ֆերմերային առաջին տնտեսությունների ձևավորմանը[36]: 1992-2001 թթ. Հայաստանի գյուղատնտե-

---

[32] *Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999թ., Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Ե., 1999, էջ 26:*

[33] **Մելքումյան Ս.**, *Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Ե., 2000, էջ 257-258:*

[34] *Հայաստանի Հանրապետություն, 28. VIII. 1999:*

[35] *ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 143, թ. 1-4:*

[36] *Հայաստանի Հանրապետություն, 9. I. 1993:*

սության ոլորտում իրականացվող բարեփոխումների համար ԱՄՆ-ը ՀՀ-ին տրամադրել է մոտ 42 մլն դոլար[37], իսկ էներգետիկ համակարգի բարեփոխումներին ուղղված օգնությունը կազմել է 107,3 մլն դոլար[38] և այլն: 1994 թ. սկզբից մինչև սեպտեմբեր ամիսը ներառյալ արտասահմանյան երկրներից Հայաստան բերված շուրջ 32 հազար տոննա մարդասիրական բեռներից մոտ 26 հազարը ներկրվել էր ԱՄՆ-ից, այդ թվում՝ կառավարության կողմից հատկացված՝ ձմռան շեմին էներգազուրկ Հայաստանին այնքան անհրաժեշտ 25.690 տոննա կերոսին[39]: Օգոստոսին ԱՄՆ-ի Կոնգրեսի և Սենատի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում որոշվեց Հայաստանին տրամադրել 75 մլն դոլարի օգնություն[40]:

1995 թ. աշխարհի տարբեր երկրներից Հայաստան ներկրված մոտ 152 մլն - դոլարի մարդասիրական բեռներից մոտ 110 մլն դոլարի ապրանքը, որպես օգնություն, Հայաստանի բնակչությանը ուղարկվել էր ԱՄՆ-ից[41]: 1996 թ. աշխարհի 32 երկրներից մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետություն մուտք գործած ընդհանուր քաշով 88 հազ. 440 տոննա ապրանքից, այդ թվում՝ կենդանական և բուսական յուղ, կաթ ու կաթնամթերք, պատրաստի սննդի արտադրանք և այլն[42], դրամական արժեքով շուրջ 72 տոկոսը ստացվել էր ԱՄՆ-ից[43]: ԱՄՆ-ի ցուցաբերած օգնությունը Հայաստանի Հանրապետությանը 1997 թվականին ևս գերազանցում էր այդ տարի աշխարհի 27 այլ երկրներից եկած օգնությանը՝ միասին վերցրած: 1997 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ Հայաստանին ցուցաբերած օգնության լուսաբանման առումով թերևս անհետաքրքիր չէ այն փաստը, որ ԱՄՆ-ի կառավարությունը շուրջ 25 մլն դոլարի հեղուկ գազ գնեց Ռուսաստանի Դաշնությունից և որպես օգնություն անվճար հատկացրեց Հայաստանին[44]: Նույն տարում Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետությանը, որպես մարդասիրական օգնություն տրամադրել էր 100 հազար տոննա պարենային ցորեն[45], դրանից անմիջապես

---

[37] **Մելիքյան Ս.Հ.** *Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000թթ., ատենախոսություն պատմ. գիտ, թեկնածուի գիտական աստիճանի հայցան համար, Ե., 2007, էջ 63:*

[38] *Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001թթ. Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Ե., 2001, էջ 23:*

[39] *Հայաստանի Հանրապետություն, 2. XI. 1994:*

[40] *Նույն տեղում, 12. VIII. 1994:*

[41] *Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 1995, 1996, Ե., 1998, էջ 181:*

[42] *Հայաստանի Հանրապետություն, 18. III. 1997:*

[43] *Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 1995, 1996, էջ 181:*

[44] *Հայաստանի Հանրապետություն, 7. V. 1998:*

[45] *Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №21, 23. IX. 1997, էջ 92-93, Հայաստանի Հանրապետություն, 25. VII. 1997:*

հետո ԱՄՆ և ՀՀ կառավարությունների միջև կնքված պայմանագրով գրեթե այդքան էլ հացահատիկ ներկրվեց Հայաստան 1998 թվականին[46] և այլն:

Հայաստանին ցուցաբերած օգնության չափերով արտասահմանյան երկրներից ՀՀ-ին հատկացվող մարդասիրական օգնության բացարձակ ծավալների նվազման պայմաններում ԱՄՆ-ը առաջինն էր նաև ժամանակահատվածի մնացած տարիներին: 1992 – 2001 թթ. Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնության ընդհանուր ծավալը դրամական արժեքով կազմել է 810 մլն դոլար[47]: Իսկ Հայաստանին ցուցաբերվող մարդասիրական օգնության չափերի նվազման պատճառը ավելի քան պարզ էր և, ըստ էության, ոչ այնքան տխրեցնող: Դա վկայում էր, որ նորանկախ Հայաստանի տնտեսությունը արդեն աստիճանաբար, բայց որոշակիորեն շտկում էր իր կքված մեջքը: Եթե 1990-ականների սկզբներին սոցիալական ծանրագույն կացության մեջ հայտնված նորանկախ Հայաստանին Միացյալ Նահանգների օգնության ծրագրի բովանդակությունը հանգում էր հիմնականում հանրապետության ազգաբնակչությանը վառելիք, սննդամթերք, հագուստ, դեղորայք և այլն տրամադրելուն, այսինքն՝ բառի բուն իմաստով մարդասիրական օգնություն հատկացնելուն, ապա դրանից հետո Հայաստանին ցուցաբերվող օգնության ընդհանուր կառուցվածքում աստիճանաբար նվազում էր այդ կարգի օժանդակության տեսակարար կշիռը՝ իր տեղը զիջելով զարգացման, ինստիտուցիոնալ վերափոխումների, հասարակական կյանքի ժողովրդավարացմանը նպաստող, ինչպես նաև էներգետիկայի բնագավառի բարելավմանը, տնտեսության մեջ մասնավոր հատվածի ընդլայնմանը միտված և այլ ծրագրերին: Բնականաբար, մեծ էր նաև ԱՄՆ-ի դերը ՀՀ-ին վարկեր տրամադրելու բնագավառում: Այսպես, 1993-1998 թթ. Հայաստանին տրամադրված 1 մլրդ 250 մլն դոլար արտասահմանյան վարկերի զգալի մասը հատկացվել էր Միացյալ Նահանգների կողմից[48]: Այդ գործում հատկապես առանձնանում էր ԱՄՆ-ի Լինսի հիմնադրամը[49]: Ամերիկահայ մեծահարուստ Քըրք Քրքորյանի նախաձեռնած և ԱՄՆ-ի հայտնի քաղաքական գործիչ, սենատոր Ռ. Դոուլի կողմից ղեկավարվող՝ Հայաստանի արդյունաբերությանն ու ձեռներեցությանը աջակցելու նպատակով ստեղծված հիմնադրամը 1997 թ. հնարավոր ամենացածր տոկոսադրույքներով հատկացրեց նորանկախ Հայաստանի պատմության մեջ մինչ այդ ամենամեծ՝ 100 մլն դոլարի հասնող վարկ[50]: Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը նպատակաուղղված վարկային այդ ծրագրով վարկերից ստացված եկամուտը դուրս

---

[46] *Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №8 (41), 20. IV. 1998, էջ 185-186:*

[47] *Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001 թթ., էջ 15:*

[48] *Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999. մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, էջ 26:*

[49] *Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N1 (67), 29. I. 1999, էջ 186, N29 (127), 8. XII. 2000, էջ 9:*

[50] *Հայաստանի Հանրապետություն, 14, 16. X. 1997:*

չէր բերվում Հայաստանից և կրկին տրամադրվող վարկի տեսքով ներառվում էր ՀՀ տնտեսության մեջ[51]: Հայաստանին վարկային դրամագլխի հատկացումները գործնականում սկսվեցին Լինսի հիմնադրամի կողմից 1998 թ. հուլիսին ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի հետ կայացած համաձայնությամբ, որի շնորհիվ հանրապետությունում իրականացվում էին փոքր և միջին բիզնեսի զարգացման ամենամյա ծրագրեր[52]: Մասնավոր ձեռնարկատիրության զարգացման, աղքատության կրճատման, նոր աշխատատեղերի ստեղծման, արտադրության ծավալների ընդլայնման, ծառայության ոլորտների գործունեության կատարելագործման և այլ նպատակներով, ինչպես նաև հանրապետությունում ավտոճանապարհների շինարարության ու բարեկարգման, □Լինսի-2□ ծրագրով ադետի գոտում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար[53] հիմնադրամը խնդրո առարկա ժամանակահատվածում զգալի ծավալի լրացուցիչ վարկեր էր տրամադրում Հայաստանին: ԱՄՆ-Հայաստան վարկային գործընթացները համակարգելու նպատակով 2000 թ. նոյեմբերին ՀՀ կառավարության և «Լինսի» հիմնադրամի միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրով[54] հիմնադրամը հանրապետությունում ծավալեց «Ներդրում» խոշորամասշտաբ վարկային ծրագիրը, որի իրագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվեց ծրագրի կառավարման հատուկ խորհուրդ՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ[55]: Փոխըմբռնման հուշագրով □Լինսի□ հիմնադրամի ընդհանուր գումարին ավելացան ֆինանսական նոր միջոցներ՝ ծրագրի ընդհանուր գումարը հասցնելով 165 մլն. դոլարի[56]: Ի դեպ, հայ-ամերիկյան տնտեսական կապերի համակարգման նպատակով առանձին կառույցների ձևավորումը ի սկզբանե եղել է երկու երկրների իշխանությունների գործունեության ուղղություններից մեկը: Այդ առումով չափազանց կարևոր էր 2000 թ. հունվարին ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև ստորագրած փաստաթղթով հայ-ամերիկյան աշխատանքային խմբի ստեղծումը: Տնտեսական փոխգործունեությունը համակարգող այդ միջպետական կառույցի հիմնական նպատակն էր խթանել Հայաստանում տնտեսության աճը և բարձրացնել երկրին ԱՄՆ-ի աջակցության ծրագրերի արդյունավետության մակարդակը[57]: Հայ-ամերիկյան աշխատանքային խումբը (USATE) գործելու էր որպես երկու երկրների գործադիր իշխանությունների միջև տնտեսական և շուկայական բարեփո-

---

[51] Նույն տեղում, 22,23. X. 1997:

[52] Նույն տեղում, 27. I. 1999, 15. VII. 2000:

[53] Հայաստանի Հանարպետություն, 10. II, 17. XII. 1999, 15. VII. 2000, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N10 (76), 30. IV. 1999, էջ 46-47:

[54] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N29 (127), 8. XII. 2000, էջ 9:

[55] Նույն տեղում, N5 (137), 23. II. 2001, էջ 100-105:

[56] Հայաստանի Հանարպետություն, 22. XI. 2000:

[57] Նույն տեղում, 28. I. 2000:

խումների իրականացման ընթացքում ծագած խնդիրներին լուծումներ տվող հաստատություն: Դրա գլխավոր խնդիրն էր միասնաբար կարգավորել համագործակցությանը վերաբերող միջկառավարական համաձայնագրերի պատրաստման և արդեն գոյություն ունեցող պայմանագրերի ներդրման ընթացքում ծագող հարցերը[58]: Աշխատանքային խմբի պարբերաբար գումարվող նիստերում քննարկվում էին տնտեսական բնագավառում երկու երկրների փոխգործունեությանը վերաբերող ամենահրատապ հարցերը, նշվում դրանց լուծման ուղիները: Այսպես՝ 2000 թվականի սեպտեմբերին Վաշինգտոնում կայացած աշխատանքային խմբի հերթական նիստի օրակարգում էին նախորդ նիստից հետո կատարված աշխատանքների հաշվետվության քննարկումը, Հայաստանում ներդրումային մթնոլորտի բարելավման խնդիրները, արտերկրյա ներդրումներին խոչընդոտող կոռուպցիայի դեմ ուղղված համատեղ միջոցառումների մշակումը, Հայաստանի էներգետիկ անվտանգության հարցը, 2001 թ. բյուջետային տարում Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան օգնության հիմնական ուղղությունները և այլն[59]:

Հայ-ամերիկյան տնտեսական կապերի համակարգման շնորհիվ շեշտակիորեն աճել էր նաև երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը: Այսպես, 2001 թ. ԱՄՆ-ը Հայաստանի հետ առևտրաշրջանառության ոլորտում երկրորդն էր Ռուսաստանից հետո[60]:

РОЛЬ США В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ И УТВЕРЖДЕНИЯ НЕЗАВИСИМОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРМЕНИИ (1990–2000гг.)

ПОГОСЯН Э. В.

Резюме

После провозглашенияя независимостия ная протяжениия десятилетияя армяно–американскиея отношенияя развивалисья весьмая динамично,я чтоя былоя обусловленоя стратег, ческ, м, я , нтересам, я СШАя вя Закавказье.я Соед, ненныея штатыя , нвес–т, ровал, яэконом, куяАрмен, , ,яодн, мя, зяпервыхяпредостав, л, я РАя гуман, тарнуюя помощь,я всяческ, я содействуяя , нс–т, туц, ональнымяпреобразован, ямявяАрмен, , хяя

---

[58] *Նույն տեղում:*

[59] *Հայաստանի Հանրապետություն, 15. IX. 2000:*

[60] **Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ.,** *Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Ե, 2002, էջ 124:*

THE ROLE OF THE USA IN ESTABLISHING INDEPENDENT STATEHOOD IN THE REPUBLIC OF ARMENIA (1990-2000)

E. POGHOSYAN

Abstract

US-Armenian relations had a dynamic development in the decades following the independence of the Republic of Armenia. The US policy towards Armenia was mainly conditioned by the US strategic interests in the entire region of Transcaucasia. During the period under review, the USA had one of the leading roles in the sense of direct investments in the economy of Armenia. Not only did the USA invest in the economy of the country, but they also offered a humanitarian aid to the Republic of Armenia fostering institutional restructuring.